

ահագին բարձրությունն, մեկ ոստումով, ամբողջ գլուխովը կը մտնէ պարկին մէջ:

Հայը, ինչով ալ զբաղի, կ'ընէ նաեւ դագաղագործութիւն: Ան ամէն օր կը շինէ քանի մը դագաղ՝ բան մը թաղելով իրմէ: Բարեբախտաբար, անսպառ է իր կենդանութիւնը: Լաւ դագաղագործ ըլլալով՝ լաւ ալ մեռել թաղող եղած է:

Գիտունները կը փնտռեն յաւիտենական շարժումը: Հայը կը ինոյայ անոնց վրայ ու կ'ըսէ իւրովի. «Ե՛ս եմ յաւիտենական շարժումը, եւ ինձի է, որ կը փնտռեն»: Ինքն ալ, սակայն, բան մը կը փնտռէ՝ Անկախութիւնը, ու զայն գտնելու համար օտարին դռները ափ կ'առնէ: Կ'ըսես իրեն. «Անկախութիւնը դուն պիտի յայտարարես»: Այս անգամ կը չեզոքանայ՝ անկախ հռչակուելու համար:

Շատ թերթ ու գիրք կը հրատարակէ: Ասով կ'ապացուցանէ որ երբեք չէ ներկայացուած Տիար Յուսահատութեան եւ ոչ մէկ ծանօթութիւն ունի անոր հետ:

Ինչ որ իրն է ու անմիջապէս դրամի չի վերածուիր, չի գնահատեր: Օրինակ իր տաղանդաւորները: Բայց վա՛յ, եթէ իր ցեղին պատկանող միջակ մը ստանայ օտարներու ներբողականը. չտեսի մը նման, մեծով պզտիկով, բարեկենդան կը սարքէ, կ'ուռի եւ կը պայթի:

Ինկի՛ր, ու Հայը ձեռք մը կուտայ քեզի: Ելի՛ր ու կ'ընդունիս իր ոտքը կամ իր նախանձէն եկող կիցը. որ, սակայն, ազգօգուտ է, որովհետեւ կը մարզէ քեզ եւ պատճառ կ'ըլլայ, որ պինդ կենաս ու ա՛լ չիյնաս:

Հայուն կրնաս ցոյց տալ բոլոր կարողութիւններդ, սակայն մի՛ յայտնէր իրեն գրպանիդ կարողութիւնը, աւելի ճիշդը ըսելով՝ անկարողութիւնը: Իր համարումը եթէ չվերնայ իսկ, անպայման կը պակսի: Ան քեզ անգին կամ թանկագին կը կարծէր ու կը համոզուի, որ աժան ապրանք ես: Ան չուզէր սորվիլ արժեքին ու գինին մէջ գտնուող տարբերութիւնը:

Հայը կապուած է իր ցեղին, իր լեզուին, քիչ թէ շատ՝ իր օրաթերթին ու գրականութեան եւ մշակոյթին: Սակայն վայ, եթէ օտար լեզու մը սորվի կարդացածը հասկնալու չափ. կամացուկ մը «մնաս բարով» կ'ըսէ իր մշակոյթին՝ վերէն նայելով անոր վրայ, ու կը բռնէ